Կարգապահական գործ թիվ ԿԳ-25059

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ ԱՐԹՈՒՐ ՆԵՐՍԵՍԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԵՎ ՎԱՀԱԳՆ ԱՐԱՅԻ ԲԱՂՐԱՄՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետև նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Կարինե Բաղդասարյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Գուրգեն Թորոսյանի, Կարեն Խալաթյանի, Արաքս Վարդանյանի և Վահագն Քեշիշյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ փաստաբաններ Արթուր Պետրոսյանի և Վահագն Բաղրամյանի,

քննության առնելով փաստաբաններ Արթուր Ներսեսի Պետրոսյանի (արտոնագիր՝ թիվ 655) և Վահագն Արայի Բաղրամյանի (արտոնագիր՝ թիվ 884) **(այսուհետև նաև՝ Փաստաբաններ կամ Պատասխանողներ)** կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Քաղաքացի Լեոնիդ Համբարձումյանը **(այսուհետև՝ Դիմող)**, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետև՝ Պալատ)**, հայտնել է, որ թիվ ՍՆԴ/0108/04/19 սնանկության գործի շրջանակներում իր շահերն են ներկայացրել փաստաբաններ Արթուր Պետրոսյանը և Վահագն Բաղրամյանը:

Թիվ ԿԳ-25059-3-Ա
04.06.2025թ.

Դիմողը նշել է, որ ներկայումս թիվ ԵԴ2/29742/02/23 գործով հանդիսանում է պատասխանող: Նշված գործով Ռոբերտ Սանոյանի և Լիլիթ Մրրիկյանի կողմից ներկայացվել է պահանջ՝ առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու մասին:

Թիվ ԵԴ2/29742/02/23 գործի շրջանակներում Հայցվորների ներկայացուցիչներն են փաստաբաններ Արթուր Պետրոսյանը և Վահագն Բաղրամյանը, ովքեր թիվ ՍՆԴ/0108/04/19 սնանկության գործի շրջանակներում իրենց հայտնի դարձած տեղեկություններն օգտագործում են ի վնաս իրեն:

Դիմողը խնդրել է քննարկել Փաստաբաններին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 14.04.2024 թվականին Դիմողին առաջարկվել է գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, սակայն Դիմողը որևէ դիրքորոշում կամ ապացույց չի ներկայացրել:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբաններ Արթուր Պետրոսյանին և Վահագն Բաղրամյանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Լեոնիդ Համբարձումյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանները նշել են, որ Դիմողը իրավաբանական օգնություն ստանալու նպատակով իրենց երբևէ չի դիմել և որևէ տեսակի շփում Դիմողի հետ չեն ունեցել:

Փաստաբանները հայտնել են, որ իրենց վստահորդն է հանդիսացել և այժմ էլ հանդիսանում է Ռոբերտ Սանոյանը:

Փաստաբանները պարզաբանել են, որ Ռոբերտ Սանոյանը և Լեոնիդ Համբարձումյանը ունեցել են մտերիմ հարաբերություններ: 2013 թվականին Ռոբերտ Սանոյանն ունեցել է ֆինանսական խնդիրներ և այդ հարցի լուծման համար նա Դիմողի հետ պայմանավորվել է, որ Լեոնիդ Համբարձումյանը կդիմի «Արմսվիսբանկ»-ին, կստանա հիփոթեքային վարկ, կեղծ գործարքի միջոցով կգնի Ռոբերտ Սանոյանի բնակարանը, վարկի գումարը կտրամադրի Ռոբերտ Սանոյանին, որպեսզի վերջինս լուծի իր ֆինանսական խնդիրները, Ռոբերտ Սանոյանն էլ կսպասարկի վարկը, իսկ երբ Ռոբերտ Սանոյանն ամբողջությամբ կկատարի Դիմողի անունով ձևակերպված վարկային պարտավորությունները, ապա վերջինս մեկ այլ գործարքի միջոցով Ռոբերտ Սանոյանի բնակարանը կվերադարձնի:

Վարկի սպասարկման սկզբնական շրջանում Ռոբերտ Սանոյանի կողմից պատշաճ կատարվել են մարումները, սակայն հետագայում Ռոբերտ Սանոյանն այլևս հնարավորություն չի ունեցել կատարելու Դիմողի անունով ձևակերպված վարկի ամսական վճարումները, ինչի հետևանքով «Արմսվիսբանկ»-ը դիմել է դատարան և պահանջել է Դիմողին սնանկ ճանաչել (ՍՆԴ/0108/04/19):

Դիմողի սնանկության գործով իրական շահառու է հանդիսացել Ռոբերտ Սանոյանը և Փաստաբանները՝ փաստացի ծառայություններ են մատուցել վերջինիս:

Փաստաբանները հավելել են, որ սնանկության վարույթի շրջանակներում դատարանը կայացրել է որոշում և թույլատրել է բնակարանի վաճառքը: Հաշվի առնելով այն, որ գրավի առարկա բնակարանը Դիմողի անվամբ է գրանցվել կեղծ գործարքի հիման վրա, Ռոբերտ Սանոյանը դիմել է իրենց բնակարանի իրացումը կասեցնելու համար, ինչի կապակցությամբ էլ հենց հարուցվել է թիվ ԵԴ/19631/02/22 քաղաքացիական գործը, որի մասով էլ՝ Դիմողն իրենց տվել է լիազորագրեր:

Փաստաբանները նշել են, որ իրենց հաջողվել է կասեցնել բնակարանի իրացումը և այդ ժամանակահատվածում Ռոբերտ Սանոյանի կողմից Դիմողի անունով ձևակերպված վարկն ամբողջությամբ մարվել է և այդ հիմքով դատարանը 2023թ. ապրիլի 18-ին կայացրել է վճիռ, որով սնանկության գործն ավարտվել է և Դիմողին համարել է ֆինանսապես առողջացած:

Կողմերի միջև առկա պայմանավորվածության համաձայն՝ Դիմողի անվամբ ձևակերպված վարկի մարումից հետո վերջինս բնակարանը պետք է վերադարձներ իրական սեփականատիրոջը՝ Ռոբերտ Սանոյանին, սակայն Դիմողը պայմանավորվածությունը խախտել է և հրաժարվել է բնակարանը վերադարձնել:

Նման պայմաններում Ռոբերտ Սանոյանին այլ բան չի մնացել, քան առոչինչ գործարքի անվավերության հետևանքներ կիրառելու մասին պահանջով դատարան հայց ներկայացնելը:

Փաստաբանները պնդել են, որ իրենց նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու որևէ հիմք առկա չէ:

Սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 14.04.2025 թվականին Փաստաբաններին առաջարկվել է գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանները սահմանված ժամկետում ներկայացրել են մի շարք ապացույցներ:

Հանձնաժողովի նիստի ժամանակ Փաստաբաններն ըստ էության պնդել են նախկինում ներկայացված դիրքորոշումը՝ հավելելով, որ Պալատի նախագահի 27.02.2025թ. թիվ 104-Ա/ԿԳ-25059 որոշումն ընդունվել է «Փաստաբանության մասին» օրենքով **(այսուհետև նաև՝ Օրենք)** սահմանված մեկամսյա ժամկետի խախտմամբ, որպիսի պայմաններում սույն կարգապահական վարույթը չի կարող իրականացվել:

Փաստաբանները, նկարագրելով Ռոբերտ Սանոյանի և Դիմողի փոխհարաբերությունները, սնանկության և քաղաքացիական գործերի առանձնահատկությունները, պնդել են, որ իրենց վստահորդ, իրական շահագրգիռ անձ է հենց Ռոբերտ Սանոյանը, այլ ոչ թե Դիմողը, և Փաստաբանների կողմից ձեռնարկված ողջ գործողություններն ըստ էության ուղղված են Ռոբերտ Սանոյանի շահերի պաշտպանությանը:

Փաստաբանները հայտնել են, որ Դիմողի շահերը ներկայացվել են լիազորագրի հիման վրա, սակայն փաստացի երբևէ չեն հանդիպել նրան:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 27.02.2025թ. թիվ 104-Ա/ԿԳ-25059 որոշմամբ փաստաբաններ Արթուր Պետրոսյանի և Վահագն Բաղրամյանի նկատմամբ Օրենքի **20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի**, ինչպես նաև **Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետև նաև՝ Կանոնագիրք) 3.2.2 և 3.2.8 ենթակետերի** խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

06.03.2025թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Գարիկ Հախնազարյանին (**այսուհետև նաև՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 06.05.2025թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-11-րդ կետերում նշված փաստերը:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 04.06.2025թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. 02.09.2022 թվականին **Ռոբերտ Սանոյանը և անհատ ձեռնարկատեր Արթուր Պետրոսյանը** կնքել են փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր, որի 1.2. կետի համաձայն՝ ծառայությունները ներառել են հետևյալը՝

- *սույն պայմանագրի գործողության ընթացքում Լեոնիդ Համբարձումյանի Վստահորդի և/կամ Լիլիթ Ռաֆիկի Մրրիկյանի մասնակցությամբ սնանկության, քաղաքացիական և/կամ վարչական գործերով դատական ներկայացուցչություն, դատավարական փաստաթղթերի կազմում:*
- *Վստահորդին առնչվող իրավական հարցերի վերաբերյալ խորհրդատվությունների և պարզաբանումների տրամադրում:*

***Սույն փաստը հաստատվում է** Ռոբերտ Սանոյանի և Արթուր Պետրոսյանի միջև 02.09.2022 թվականին կնքված պայմանագրի պատճենով:*

2. 02.09.2022 թվականին **Ռոբերտ Սանոյանը** և «Լեգալ Ըսիպլինա Լոու Գրուպ»

ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Վահագն Բաղրամյանի կնքել են փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր, որի 1.2. կետի համաձայն՝ ծառայությունները ներառել են հետևյալը՝

- *սույն պայմանագրի գործողության ընթացքում* ***Լեոնիդ Համբարձումյանի*** *Վստահորդի և/կամ Լիլիթ Ռաֆիկի Մրրիկյանի մասնակցությամբ սնանկության, քաղաքացիական և/կամ վարչական գործերով դատական ներկայացուցչություն, դատավարական փաստաթղթերի կազմում:*
- *Վստահորդին առնչվող իրավական հարցերի վերաբերյալ խորհրդատվությունների և պարզաբանումների տրամադրում:*

Սույն փաստը հաստատվում է *Ռոբերտ Սանոյանի և «Լեգալ Ըսիսթընս Լոու Գրուպ» ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Վահագն Բաղրամյանի միջև 02.09.2022 թվականին կնքված պայմանագրի պատճենով:*

3. Թիվ ՍՆԴ/0108/04/19 սնանկության գործով «Արմսվիսբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը 06.02.2019 թվականին դիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության սնանկության դատարան՝ Լեոնիդ Լևոնի Համբարձումյանին սնանկ ճանաչելու մասին: ***Սույն փաստը հաստատվում է*** *Թիվ ՍՆԴ/0108/04/19 սնանկության գործի վերաբերյալ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով:*

4. Թիվ *ՍՆԴ* /0108/04/19 սնանկության գործով 18.04.2023թ. Դատարանը վճռել է. *«1. Պարտապան Լեոնիդ Լևոնի Համբարձումյանի սնանկության կառավարիչ Տիգրան Սահակյանի միջնորդությունը՝ սնանկության գործն ավարտելու վերաբերյալ, բավարարել: 2. Ավարտել Լեոնիդ Լևոնի Համբարձումյանի /պարտապանի հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Ղափանցյան փողոց 27 տուն, անձնագիր՝ AE 0445864, տրված՝ 21.07.1999 թվականին, 004-ի կողմից/ սնանկության վերաբերյալ թիվ ՍՆԴ/0108/04/19 գործը: 3. Լեոնիդ Լևոնի Համբարձումյանին համարել ֆինանսապես առողջացած:»:* ***Սույն փաստը հաստատվում է*** *թիվ ՍՆԴ/0108/04/19 սնանկության գործի վերաբերյալ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով:*

5. Փաստաբանները Լեոնիդ Համբարձումյանի շահերի պաշտպանության ապահովման կապակցությամբ կատարել են որոշակի գործողություններ, որոնք կապված են եղել թիվ *ՍՆԴ* /0108/04/19 սնանկության գործի հետ: ***Սույն փաստը հաստատվում է*** *Փաստաբանների կողմից Հանձնաժողովի նիստի ընթացքում տրված բացատրություններով:*

6. 11.11.2022թ. Լեոնիդ Համբարձումյանը լիազորել է փաստաբաններ Արթուր Պետրոսյանին և Վահագն Բաղրամյանին իրականացնել իր շահերի պաշտպանությունը թիվ ԵԴ/19631/02/22 քաղաքացիական գործի շրջանակներում: ***Սույն փաստը հաստատվում է*** *11.11.2022թ. տրամադրված լիազորագրերի պատճեններով:*

7. Թիվ ԵԴ/19631/02/22 քաղաքացիական գործով Փաստաբանները կազմել են հայցից հրաժարվելու վերաբերյալ դիմում: ***Սույն փաստը հաստատվում է*** *Փաստաբանների բացատրություններով և գործում առկա Դիմողի կողմից դիմումին կից ներկայացված 14.04.2023թ. գրությամբ և էլեկտրոնային փոստի քաղվածքով:*

8. Թիվ ԵԴ/19631/02/22 քաղաքացիական գործով՝ ըստ հայցի Լեոնիդ Լևոնի

Համբարձումյանի ընդդեմ «Արմսվիսբանկ» փակ բաժնետիրական ընկերության, ՀՀ կադաստրի կոմիտեի՝ առուվաճառքի և հիփոթեքի պայմանագիրը չկնքված ճանաչելու և որպես հետևանք առուվաճառքի և հիփոթեքի պայմանագրի հիման վրա ծագած «Արմսվիսբանկ» փակ բաժնետիրական ընկերության գրավի իրավունքի պետական գրանցումը անվավեր ճանաչելու պահանջի մասին վարույթը կարճվել է, քանի որ Դիմողը հրաժարվել է իր ներկայացրած պահանջից: ***Սույն փաստը հաստատվում է*** *«Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով:*

9. 11.09.2023 թվականին Ռոբերտ Ալբերտի Սանոյանը և Լիլիթ Ռաֆիկի Մրրիկյանը հայցադիմում են ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ Լեոնիդ Լևոնի Համբարձումյանի, երրորդ անձ՝ Կադաստրի կոմիտեի՝ գործարքն առոչինչ ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին, որին տրվել է թիվ ԵԴ2/29742/02/23 համարը: ***Սույն փաստը հաստատվում է*** *թիվ ԵԴ2/29742/02/23 քաղաքացիական գործի վերաբերյալ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով:*

10. Թիվ ԵԴ2/29742/02/23 քաղաքացիական գործով Ռոբերտ Ալբերտի Սանոյանի և Լիլիթ Ռաֆիկի Մրրիկյանի շահերը ներկայացնում են փաստաբաններ Վահագն Բաղրամյանը և Արթուր Պետրոսյանը: ***Սույն փաստը հաստատվում է*** *թիվ ԵԴ2/29742/02/23 քաղաքացիական գործի վերաբերյալ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի քաղվածքով, կողմերի բացատրությամբ ինչպես նաև ներկայացված դատական նիստի ձայնագրություններով:*

11. Թիվ ԵԴ2/29742/02/23 քաղաքացիական գործով փաստաբան Արթուր Պետրոսյանի կողմից ներկայացվել է միջնորդություն, որում նշված է հետևյալը. *«(...) Պնդում ենք, որ իրականում նշված վարկով իրական վարկառու է հանդիսացել ոչ թե Պատասխանողը, այլ՝ Հայցվոր Ռոբերտ Ալբերտի Սանոյանը: Նշված հանգամանքը հաստատվում է ինչպես վճարման անդորրագրերով, այնպես էլ այն հանգամանքով, որ երբ Ռոբերտ Ալբերտի Սանոյանի պատճառով Պատասխանողը չի կարողացել կատարել վարկային պարտավորությունները և Պատասխանողը «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ի հարկադրված սնանկության դիմումի հիման վրա այդ հիմքով ճանաչվել է սնանկ (սնանկության գործ թիվ ՍՆԴ/0108/04/19), Պատասխանողի շահերը դատարանում՝ այդ թվում նաև ՀՀ սնանկության դատարանում պաշտպանել են Ռոբերտ Ալբերտի Սանոյանի ներկայացուցիչներ Վահագն Բաղրամյանը և Արթուր Պետրոսյանը (...):»:* ***Սույն փաստը հաստատվում է*** *միջնորդության պատճենով:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝

Արթուր Ներսեսի Պետրոսյանը փաստաբան է հանդիսանում 09.11.2006 թվականից, և 2020-2025թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ, իսկ

Վահագն Արայի Բաղրամյանը փաստաբան է հանդիսանում 24.10.2009 թվականից, և 2020-2025թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբաններ Արթուր Ներսեսի Պետրոսյանը և Վահագն Արայի Բաղրամյանն ենթակա են կարգապահական պատասխանատվության Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի, ինչպես նաև **Կանոնագրքի 3.2.2 և 3.2.8 ենթակետերի խախտման համար՝ հետևյալ պատճառաբանությամբ.**

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ... :*

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Օրենքի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:*

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններն իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Այս համատեքստում, կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում փաստաբանի վարքագծում համապատասխան խախտումների հատկանիշների առկայության ապացուցման հանգամանքը, ինչի անտեսումը կամ չապահովումը թույլ է տալիս եզրակացնել փաստաբանի վարքագծում առերևույթ խախտման հատկանիշների բացակայության մասին, քանի որ դրանք չեն հաստատվել վարույթի ընթացքում: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր կողմ պարտավոր է ապացուցել իր կողմից վկայակոչված հանգամանքները, կրում է դրանք ապացուցված չլինելու բացասական հանգամանքները, իսկ փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են վերջինիս օգտին:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Տվյալ դեպքում, Դիմողն, ըստ էության, Փաստաբաններին վերագրում է շահերի հակասության պայմաններում ի վնաս նախկին վստահորդի գործելու, ինչպես նաև վստահված գաղտնիքի կամ այնպիսի տեղեկատվության, որը կարող է անբարեխիղճ արտոնություն ստեղծել նոր վստահորդի համար, բացահայտելու վարքագիծը:

Կարգապահական վարույթի շրջանակներում վերը նշված հանգամանքները հնարավոր է պարզել՝ պատասխանելով մասնավորապես հետևյալ հարցերին.

- ***արդյո՞ք Լեոնիդ Համբարձումյանը հանդիսացել է փաստաբաններ Արթուր Պետրոսյանի և Վահագն Բաղրամյանի նախկին վստահորդը,***
- ***արդյո՞ք թիվ ԵԴ2/29742/02/23 քաղաքացիական գործով Լեոնիդ Համբարձումյանի և Ռոբերտ Սանոյանի շահերը հակասում են միմյանց,***
- ***արդյո՞ք փաստաբաններ Արթուր Պետրոսյանը և Վահագն Բաղրամյանը կարող էին սպանձնել Ռոբերտ Սանոյանի իրավունքների պաշտպանությունը թիվ ԵԴ2/29742/02/23 գործով,***
- ***արդյո՞ք թիվ ՍԵԴ /0108/04/19 և ԵԴ/19631/02/22 գործով առկա է նախորդ վստահորդի կողմից վստահված գաղտնիքի բացահայտման վտանգ, և արդյո՞ք այդ գործում տվյալ տեղեկատվությունները, որոնց տիրապետում են Փաստաբանները նախորդ վստահորդի վերաբերյալ, կարող է անբարեխիղճ արտոնություններ ստեղծել նոր վստահորդների համար:***

Համադրելով սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողի և Փաստաբանների կողմից ներկայացված բացատրություններն ու ապացույցները, մեջբերված նորմերն ու հիմնավորումները, ինչպես նաև անդրադառնալով դրանց վերը ներկայացված հարցադրումների համատեքստում, Հանձնաժողովն արձանագրում է, որ Ռոբերտ Սանոյանը դիմել է Փաստաբաններ Արթուր Պետրոսյանին և Վահագն

Բաղրամյանին՝ Դիմողի շահերը ներկայացնելու համար, մասնավորապես՝ իրականացնել դատական ներկայացուցչություն վերջինիս մասնակցությամբ սնանկության, քաղաքացիական և/կամ վարչական գործերով, դատավարական փաստաթղթերի կազմում, ինչպես նաև տրամադրել խորհրդատվություններ և պարզաբանումներ նրան առնչվող իրավական հարցերի վերաբերյալ:

Ըստ այդմ, Փաստաբանները ստանձնել են Դիմողի շահերի պաշտպանությունը, ինչի կապակցությամբ կատարել են թիվ *ՍՆԴ* /0108/04/19 սնանկության գործի հետ կապված, սակայն դատավարությունից դուրս որոշակի գործողություններ:

Բացի այդ, Փաստաբանները նաև լիազորվել են իրականացնել Դիմողի շահերի պաշտպանությունը թիվ ԵԴ/19631/02/22 քաղաքացիական գործով, այդ թվում՝ Արթուր Պետրոսյանը կազմել և դատարան է ներկայացնել հայցից հրաժարվելու վերաբերյալ դիմում, ինչի արդյունքում՝ նշված գործի վարույթը կարճվել է, թեև հանձնաժողովի նիստի ժամանակ հանձնաժողովի զեկուցող անդամի այն հարցին, թե Լեոնիդ Համբարձումյանի անունից որևէ գործողություն իրենց կողմից կատարվե՞լ է, թե ոչ պատասխանել են, որ չի կատարվել:

Հետագայում, Ռոբերտ Սանոյանը և Լիլիթ Մրրիկյանը հայցադիմում են ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ Դիմող Լեոնիդ Համբարձումյանի, երրորդ անձ Կադաստրի կոմիտեի՝ գործարքն առոչինչ ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջի մասին, որը ստացել է թիվ ԵԴ2/29742/02/23 համարը: Նշված գործի շրջանակներում Ռոբերտ Սանոյանի և Լիլիթ Մրրիկյանի շահերը ներկայացրել են Փաստաբանները և, ի թիվս այլնի, ներկայացվել է միջնորդություն, որում նշված է հետևյալը. *«(...) Պնդում ենք, որ իրականում նշված վարկով* ***իրական վարկառու է հանդիսացել ոչ թե Պատասխանողը, այլ՝ Հայցվոր Ռոբերտ Ալբերտի Սանոյանը****: Նշված հանգամանքը հաստատվում է ինչպես վճարման անդորրագրերով, այնպես էլ այն հանգամանքով, որ* ***երբ Ռոբերտ Ալբերտի Սանոյանի պատճառով Պատասխանողը չի կարողացել կատարել վարկային պարտավորությունները*** *և* ***Պատասխանողը «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ի հարկադրված սնանկության դիմումի հիման վրա այդ հիմքով ճանաչվել է սնանկ*** *(սնանկության գործ թիվ ՍՆԴ /0108/04/19),* ***Պատասխանողի շահերը դատարանում՝ այդ թվում նաև ՀՀ սնանկության դատարանում պաշտպանել են Ռոբերտ Ալբերտի Սանոյանի ներկայացուցիչներ Վահագն Բաղրամյանը և Արթուր Պետրոսյանը*** *(...):»:*

Բացի վերը նշված միջնորդությունից, թիվ ԵԴ2/29742/02/23 քաղաքացիական գործով 24.06.2024թ. կայացած դատական նիստի ժամանակ փաստաբան Արթուր Պետրոսյանը հայտարարել է. «Ես փաստաբան Արթուր Պետրոսյանս և գործընկեր Վահագն Բաղրամյանը, որ սույն գործով հանդիսանում ենք Ռոբերտ Սանոյանի շահերն ենք ներկայացնում և Ռոբերտ Սանոյանի շահերը իր սնանկության վարույթի շրջանակներում ներկայացնում ենք արդեն երրորդ թե չորրորդ տարին, մենք հանդես ենք եկել նաև որպես Լեոնիդ Համբարձումյանի ներկայացուցիչներ, ես դատարանին ներկայացրել եմ երկու բնօրինակ լիազորագրեր, մեկը՝ երբ որ Լեոնիդ Համբարձումյանը լիազորել է ինձ, մյուսը՝ Վահագն Բաղրամյանին: Մենք, էդ գործի շրջանակներում

ներկայացրել ենք Լեոնիդի շահերը.....», նշել է նաև, որ. «Մեծ հաշվով, որ սենց նայենք ինչ որ մի տեղ էլ Ռոբերտի այս գործողությունների պատճառով, որ ինքը չի կարողացել Լեոնիդի անունով վերցրած վարկը մարել, ինչ որ տեղ տուժելա Լեոնիդը, միգուցե դրանից իրենց հարաբերությունները վատացել, չգիտեմ.....»: Ուսումնասիրելով նաև ներկայացված ձայնագրություններն ակնհայտ է, որ առնվազն ԵԴ2/29742/02/23 քաղաքացիական գործով հայցադիմումը դատարան ներկայացնելու ժամանակ փաստաբաններին հայտնի է եղել Լեոնիդ Համբարձումյանի և Ռոբերտ Սանոյանի շահերի հակասության փաստը: Դեռ ավելին՝ Հանձնաժողովի զեկուցող անդամի այն հարցին, թե արդյոք ԵԴ/19631/02/22 քաղաքացիական գործով հայցից հրաժարվելու վերաբերյալ դիմումը դատարան նեկայացնելուց առաջ կատարվելիք գործողությունները համաձայնեցվել են վստահորդի՝ Լեոնիդ Համբարձումյանի հետ, թե՝ ոչ, Փաստաբանները պատասխանել են, որ՝ ոչ, ինչը ևս հաստատում է Ռոբերտ Սանոյանի և Լիլիթ Մրրիկյանի համար անբարեխիղճ արտոնության առաջացման հնարավորությունը:

Տվյալ դեպքում, Հանձնաժողովն, անդրադառնալով Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի, ինչպես նաև Կանոնագիրք 3.2.2 ենթակետի պահանջների խախտմանը, հարկ է համարում արձանագրել, որ

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը և ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով:*

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանը կարող է իրականացնել հետևյալ գործունեությունը՝*

1) խորհրդատվություն, ներառյալ՝ վստահորդներին խորհրդատվություն տրամադրելը նրանց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, փաստաթղթերի ուսումնասիրումը, իրավաբանական բնույթի այլ փաստաթղթերի կազմումը (այսուհետ՝ խորհրդատվություն):

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է առաջնորդվել առնվազն հետևյալ վարքագծի կանոններով. (...)*

5) ցույց չտալ իրավաբանական օգնություն, երբ՝ (...)

դ. պետք է ներկայացնի վստահորդի շահերը որևէ գործում, և այդ անձի շահերը հակասում են նախկին վստահորդի շահերին, բացառությամբ այն դեպքերի, երբ նախկին վստահորդը տալիս է իր գրավոր համաձայնությունը. (...):

Կանոնագրքի 3.2.2 ենթակետի համաձայն՝ *Փաստաբանն իրավունք չունի իրավական օգնություն ցույց տալ երկու կամ ավելի վստահորդի նույն հարցով, եթե նրանց շահերի միջև հակասություն կա:* ***Փաստաբանը պարտավոր է ցույց չտալ***

իրավաբանական օգնություն, երբ պետք է ներկայացնի վստահորդի շահերը որևէ գործում, և այդ անձի շահերը հակասում են նախկին վստահորդի շահերին, բացառությամբ այն դեպքերի, երբ նախկին վստահորդը տալիս է իր գրավոր համաձայնությունը: *Նշված դեպքում փաստաբանը հանձնարարությունը կարող է ընդունել միայն վստահորդի գրավոր համաձայնության պայմանով (այս պայմանը համարվում է պահպանված նաև փաստաբանի (փաստաբանական գրասենյակի) և վստահորդի միջև կնքված պայմանագրում համապատասխան վերապահում կատարված լինելու դեպքում...:*

Կանոնագրքի 1.4 կետի 8-րդ պարբերության համաձայն՝ *վստահորդ է հանդիսանում ֆիզիկական կամ իրավաբանական անձ (պետություն կամ համայնք), որը դիմել է փաստաբանի օգնությանը. վստահորդը նաև հանդիսանում է պատվիրատու,*

Նույն կետի 9-րդ պարբերության համաձայն՝ *պատվիրատու է հանդիսանում վստահորդ չհանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը փաստաբանի կամ փաստաբանական գրասենյակի հետ կնքել է պայմանագիր վստահորդի շահերը ներկայացնելու համար:*

Նույն կետի 10-րդ պարբերության համաձայն՝ *հակառակորդ կողմ է հանդիսանում փաստաբանի վստահորդի հետ վեճ ունեցող անձը, կամ փաստաբանի վստահորդի դատավարական հակառակ կողմը.*

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Ըստ այդ, Օրենքին համապատասխան, Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը, անդրադառնալով փաստաբան-վստահորդ հարաբերություններին, սահմանել է նաև այդ հարաբերություններում հանդես իրավական օգնություն հայցող անձի հասկացությունը, ում օգտին փաստաբանը կատարում է որոշակի գործողություններ, ինչի հաշվառմամբ, բացահայտելով փաստաբանական գործունեության էությանը, սահմանվել են նաև այն նվազագույն գործողությունները, որոնք իրենց բովանդակությամբ ներառվում են փաստաբանական գործունեության մեջ՝ այն է, ի թիվս այլնի, խորհրդատվության տրամադրումը:

Վերոգրյալի հաշվառմամբ, փաստաբանի համար վստահորդի իրավունքների և շահերի բարեխղճորեն պաշտպանելու պարտականությունից բացի, փաստաբանի համար սահմանվում է նաև պարտավորություն յուրաքանչյուր դեպքում դիտարկելու, թե ովքեր են հանդիսանում իր վստահորդի հակառակորդ կողմերը, որպեսզի ողջամտորեն հնարավոր լինի գնահատել ստանձնած հանձնարարության հնարավոր ռիսկերը և իրավական հետևանքները՝ կանխելով իր կողմից Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջների հնարավոր խախտումները:

Այլ կերպ ասած, փաստաբանը պարտավոր է ցույց չտալ իրավական օգնություն, երբ պետք է ներկայացնի վստահորդի շահերը որևէ գործում, և այդ անձի շահերը հակասում

են նախկին վստահորդի շահերին, որպիսի սահմանափակումը կարող է հաղթահարվել բացառապես այն դեպքում, երբ նախկին վստահորդը տալիս է իր գրավոր համաձայնությունը այդ կապակցությամբ:

Ընդ որում, փաստաբանի համար նոր գործի ստանձնման արգելք է հանդիսանում այն իրավիճակը, երբ առկա է նախկին վստահորդի վստահված գաղտնիքի բացահայտման վտանգ, կամ նման տեղեկատվության տիրապետումը փաստաբանի կողմից կարող է հանգեցնել կողմերի մրցակցության իրավունքի խախտմանը:

Հետևապես, Օրենքով և Կանոնագրքով սահմանված շահերի բախման ինստիտուտի շրջանակներում այդ մասին վերաբերող կարգավորումները ենթադրում են մի քանի վավերապայմանների առկայությունը՝ մասնավորապես,

- փաստաբանը նախկինում որևէ գործով իրավաբանական օգնություն է ցույց տալիս անձի (նախկին վստահորդը),
- փաստաբանը մեկ այլ գործով իրավաբանական օգնություն է ցույց այլ անձի (նոր վստահորդի),
- Նախկին և նոր վստահորդների՝ որպես հակառակորդ կողմեր շահերը տվյալ գործով հակասում են միմյանց,
- Նախկին վստահորդը գրավոր համաձայնություն չի տվել փաստաբանին՝ հետագայում իր մասնակցությամբ որևէ գործով շահերի հակասության պայմաններում այլ վստահորդի շահերը ներկայացնելու համար:

Համադրելով վերը ներկայացված նորմերը և հիմնավորումները գործի փաստական հանգամանքներին՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանները, Դիմողի շահերի պաշտպանության նպատակով կատարել են որոշակի գործողություններ թիվ *ՍՆԴ* /0108/04/19 սնանկության գործի հետ կապված, ինչպես նաև նրա անունից հանդես են եկել թիվ ԵԴ/19631/02/22 քաղաքացիական գործով, փաստացի մատուցել են ծառայություններ վերջինիս, ինչի արդյունքում այդ ծառայությունների հասցեատեր հանդիսացող Դիմողը ձեռք է բերել վստահորդի կարգավիճակ, ինչն իր հերթին ուղղակիորեն բխել է Ռոբերտ Սանոյանի և Փաստաբանների միջև կնքված պայմանագրերի առարկայից:

Այլ կերպ ասած, անկախ այն հանգամանքից, թե ինչ հիմունքներով և ինչ բովանդակությամբ են Փաստաբանները մատուցել Դիմողին փաստաբանական ծառայություններ, այն իր բնույթով ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի՝ Դիմողի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացման ու պաշտպանության ապահովմանը և հանդիսանում է փաստաբանական գործունեության եղանակներից մեկը, որի ստացողը կարող է լինել միայն վստահորդը, ինչը որևիցե կերպ չէր ենթադրում մեկ այլ անձի շահագրգռվածության առկայություն կամ բացակայություն:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի համաձայն՝ «վստահորդ» -ը ֆիզիկական կամ իրավաբանական անձ է (պետություն կամ համայնք), որը դիմել է փաստաբանի օգնությանը. վստահորդը նաև հանդիսանում է պատվիրատու:

Այս համատեքստում, Հանձնաժողովը հարկ է համարում նաև փաստել, Փաստաբանների «օրինական շահ» եզրույթի համատեքստում «վստահորդի» կարգավիճակի վերաբերյալ հիմնավորումների հաշվառմամբ կարող է ստեղծվել մի

իրավիճակ, երբ փաստաբան-վստահորդ հարաբերությունները և համապատասխանաբար դրանց շրջանակներում գործող սկզբունքներն ու երաշխիքները ձեռք են բերելու ֆորմալ բնույթ և չեն կիրառվելու, ինչը ոչ միայն հակասում է փաստաբանական գործունեության իրավապաշտպան էությանը, այլ նաև վտանգավոր է: Այլ կերպ ասած, փաստաբանական ծառայությունների (իրավական օգնության) հասցեատիրոջ կարգավիճակը «վստահորդ» հանդիսանալու կամ չհանդիսանալու տեսանկյունից փաստաբանը քննարկելու է նրա իրական, օրինական կամ փաստացի շահի առկայության հանգամանքից ելնելով, ինչի արդյունքում կստացվի, որ եթե փաստաբանական ծառայությունների (իրավական օգնության) հասցեատիրոջ շահը «օրինական» չէ, ապա նա չի կարող համարվել «վստահորդ»:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանների կողմից ձեռնարկված գործողությունները, իրենց պնդման համաձայն, ուղղված են եղել Ռոբերտ Սանոյանի շահերի ու իրավունքների պաշտպանության ապահովմանը, սակայն դա ամենևին չի նշանակում, որ Դիմողը չուներ կամ չէր կարող ունենալ վստահորդի կարգավիճակ, քանի որ հենց Դիմողն էր հանդիսանում իրավական օգնություն ստացող սուբյեկտը, որպիսի պայմաններում չի էլ կարող խոսք լինել նրա իրական շահագրգռվածություն կամ օրինական շահերի առկայության կամ բացակայության մասին: Այսինքն, այն հանգամանքը, որ Փաստաբանները ձեռնարկել են որոշակի գործողություններ Դիմողի անունից, արդեն իսկ վկայում է այն մասին, որ Դիմողն ունեցել է հստակ շահ և իրավունք, որի պաշտպանությունը պետք է ապահովված լիներ սնանկության և քաղաքացիական գործերով:

Նման պայմաններում Հանձնաժողովն ընդգծում է փաստն առ այն, որ թիվ ԵԴ2/29742/02/23 քաղաքացիական գործով հայցվորներ հանդիսացող Ռոբերտ Սանոյանի և Լիլիթ Մրրիկյանի կողմից հետագայում Փաստաբաններին դիմելու պահին առկա էին հանձնարարության ընդունումը բացառող հանգամանքներ՝ նախկին վստահորդ Դիմողի և ներկայումս իրավական օգնություն հայցող անձանց միջև՝ որպես նշված քաղաքացիական գործերով հակառակորդ կողմերի շահերի հակասություն:

Հաշվի առնելով նշվածը, ինչպես նաև այն փաստը, որ Դիմողը չի տվել իր գրավոր համաձայնությունը Փաստաբաններին հետագայում իր՝ որպես նախկին վստահորդի մասնակցությամբ որևէ գործով շահերի հակասության պայմաններում այլ վստահորդի շահերը ներկայացնելու համար, Ռոբերտ Սանոյանի և Լիլիթ Մրրիկյանի՝ Փաստաբաններին դիմելու պահին վերջիններս արդեն իսկ չէին կարող ստանձնել Ռոբերտ Սանոյանի և Լիլիթ Մրրիկյանի շահերի պաշտպանությունը, մինչդեռ քննարկման առարկա հանդիսացող իրավիճակում Փաստաբանները ոչ միայն ստանձնել են նրա՝ որպես նոր վստահորդների շահերի պաշտպանությունը, այլ նաև իրականացրել են որոշակի գործողություններ այդ կապակցությամբ, որոնք համապատասխանաբար հակադրվել են Դիմողի շահերին:

Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ եթե Փաստաբանների կողմից ձեռնարկված գործողությունները և ողջ մարտավարությունը ուղղված է եղել Ռոբերտ Սանոյանի շահերի պաշտպանության ապահովմանը, ապա նրանք դրանից կերպ զրկված չեն եղել Դիմողին իրավաբանական օգնություն ցույց տալու ընթացքում

Կանոնագրքի 3.2.2 ենթակետով նախատեսված համաձայնության կազմման հարցին անդրադառնալու հնարավորությունից, որպիսի հանգամանքը ինքնին բավարար կլիներ բացառության կիրառման համար, մինչդեռ սույն գործով այդպիսի համաձայնություն փաստացի չի կազմվել, ինչի հաշվառմամբ Փաստաբանները պետք է կանխատեսեին հնարավոր ռիսկերը թիվ ԵԴ2/29742/02/23 քաղաքացիական գործով հայցվոր Ռոբերտ Սանոյանի շահերի պաշտպանությունը ստանձնելիս:

Միաժամանակ, անդրադառնալով Կանոնագիրք 3.2.8 ենթակետի պահանջների խախտմանը, Հանձնաժողովը հարկ է համարում ընդգծել, որ

Կանոնագրքի 3.2.8 ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պետք է հրաժարվի նոր վստահորդի օգտին գործել, եթե առկա է նախորդ վստահորդի կողմից վստահված գաղտնիքի բացահայտման վտանգ, կամ եթե այն տեղեկատվությունը, որին տիրապետում է փաստաբանը նախորդ վստահորդի վերաբերյալ, կարող է անբարեխիղճ արտոնություն ստեղծել նոր վստահորդի համար:*

Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Փաստաբանական գաղտնիք են համարվում այն տեղեկությունները և ապացույցները, որոնք իրավաբանական օգնություն հայցող անձը փոխանցել է փաստաբանին, փաստաբանի տված խորհրդատվության բովանդակությունն ու բնույթը, ինչպես նաև այն տեղեկությունները և ապացույցները (նյութերը, կրիչները), որոնք փաստաբանը փաստաբանական գործունեության իրականացման ընթացքում ձեռք է բերել ինքնուրույն:*

ՀՀ սահմանադրական դատարանն իր 05.20.16 թվականի թիվ ՍԴՈ 1263 որոշմամբ սահմանել է, *որ փաստաբանության խնդիրն է անձին որակյալ իրավաբանական օգնության տրամադրումը: Ըստ այդմ, փաստաբանը հանդիսանալով իրավապաշտպան գործունեություն իրականացնող և քաղաքացիական հասարակության կարևորագույն ինստիտուտներից մեկը՝ փաստաբանությունը ներկայացնող անձ, ունի առանձնահատուկ սոցիալ-իրավական կարգավիճակ, որը չի սկսվում և ավարտվում միայն վստահորդի հանձնարարության պատշաճ կատարմամբ, այլ ընդգրկում է փաստաբանի իրավական և բարոյական պարտականությունների որոշակի ամբողջություն: Մասնավորապես, փաստաբանը պետք է մշտապես գործի իր վստահորդի շահերին համապատասխան, և վստահորդի շահերը դասի իր շահերից վեր,* ***անգամ այն դեպքերում, երբ նա արդեն նախկին վստահորդ է:***

Նշված նորմի բովանդակությունից հետևում է, որ փաստաբանական գաղտնիքի հասկացությանը տրված է լայն սահմանում, որի ուժով փաստաբանի և վստահորդի հարաբերությունների ամբողջ շրջանակը՝ ներառյալ փոխանցված տեղեկատվությունը, ապացույցները, փաստաբանի կողմից տրամադրված խորհրդատվության բովանդակությունն ու բնույթը, ընկնում են փաստաբանական գաղտնիքի տիրույթի շրջանակ: Ընդ որում, դատելով Օրենքի նշյալ սահմանումից, փաստաբանական գաղտնիք հանդիսացող տեղեկատվությունը չի սահմանափակվում դատաքննության ընթացքում ներկայացված՝ գործի հանգամանքներով, ապացույցներով և այլ տվյալներով և ընդգրկում է նաև փաստաբան-վստահորդ շփումների այն մասը, որը չի արտացոլվում գործի շրջանակներում:

Իր հերթին, քննարկելով նախորդ վստահորդի կողմից փաստաբանին վստահված գաղտնիքի բացահայտման վտանգի կամ նրա կողմից նախորդ վստահորդի վերաբերյալ տիրապետվող և նոր վստահորդի համար անբարեխիղճ արտոնություն ստեղծող տեղեկատվության առկայությամբ պայմանավորված Փաստաբանի կողմից նոր վստահորդի օգտին գործելու հրաժարվելու վարքագիծը, Հանձնաժողովը հարկ է համարում ընդգծել, որ այդ նորմի պահանջի **խախտումը վրա է հասնում ոչ թե համապատասխան տեղեկատվության բացահայտման կամ դրա հետևանքով նախորդ վստահորդի համար անբարենպաստ հետևանքների առաջացմամբ, այլ միայն դրա հնարավորությամբ:** Հետևապես, եթե առկա է վտանգ կամ հնարավորություն, որ նոր վստահորդի շահերը պաշտպանելով՝ նախկին վստահորդի կողմից փաստաբանին հայտնված գաղտնի տեղեկությունները կարող են բացահայտվել, և (կամ) փաստաբանի կողմից այդ տեղեկատվության տիրապետման հետևանքով կարող է անբարեխիղճ արտոնություն առաջանալ նոր վստահորդի մոտ նախկին վստահորդի նկատմամբ, ապա փաստաբանը պարտավոր է հրաժարվել նոր վստահորդի օգտին գործելուց: Այսինքն՝ միայն վերոնշյալ հետևանքների առաջացման հնարավորությունը բավական է, որ փաստաբանի համար առաջանա նոր վստահորդի հետ հարաբերությունները խզելու պարտավորությունը, որի չկատարումը հանգեցնում է փաստաբանի կարգապահական պատասխանատվության:

Հարկ է նշել նաև, որ նույնիսկ եթե առկա լիներ վստահորդի գրավոր համաձայնությունն՝ ուղղված փաստաբանին, ապա այն որևէ նշանակություն չի կարող ունենալ Կանոնագրքի 3.2.8 ենթակետով սահմանված վարքագծի գնահատման համար, քանի որ նշված ենթակետը ուղղակիորեն վերաբերում է այն դեպքերին, երբ առկա է վստահված գաղտնիքի բացահայտման վտանգ կամ տեղեկությունը կարող է անբարեխիղճ արտոնություն ստեղծել նոր վստահորդի համար:

Սույն որոշմամբ անդրադառնալով Փաստաբանների վարքագծում Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի, ինչպես նաև Կանոնագիրք 3.2.2 ենթակետի պահանջների խախտման հատկանիշների առկայությանը, Հանձնաժողովն արդեն իսկ արձանագրել է Փաստաբանների կողմից Դիմողին փաստաբանական ծառայությունների մատուցման և վերջինիս նախկին վստահորդ հանդիսանալու փաստերը:

Մասնավորապես, Փաստաբանները Դիմողի շահերի պաշտպանության կապակցությամբ կատարել են որոշակի գործողություններ թիվ *ՍՆԴ* /0108/04/19 սնանկության գործի և ԵԴ/19631/02/22 քաղաքացիական գործի շրջանակներում, որպիսի փաստը ընդունել են նաև Հանձնաժողովի նիստին:

Ըստ այդմ, հարկ է արձանագրել, որ թիվ ՍՆԴ/0108/04/19 սնանկության գործի հիմքում ի թիվս այլնի ընկած է եղել Դիմողի և «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ի միջև կնքված առուվաճառքի և հիփոթեքի պայմանագիրը, համաձայն որի՝ Գրավատու Լեոնիդ Լևոնի Համբարձումյանը գրավ է դրել սեփականության իրավունքով իրեն պատկանող ՀՀ, ք. Երևան, Արաբկիր, Քանաքեռ ՀԷԿ 1 շենքի թիվ 17 հասցեում գտնվող բնակարանը:

Իր հերթին, թիվ ԵԴ/19631/02/22 քաղաքացիական գործով ըստ Դիմողի հայցի ընդդեմ «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ի՝ վեճի առարկան ևս հանդիսացել է հիշյալ

պայմանագիրը:

Ընդ որում, ինչպես պնդել են Փաստաբանները և ինչպես երևում է թիվ ԵԴ2/29742/02/23 քաղաքացիական գործով վերջիններիս կողմից ներկայացված միջնորդությունից, դատական գործի ձայնագրության կրիչների բովանդակությունից նշված պայմանագիրը փաստացի պետք է կնքված լիներ Ռոբերտ Ալբերտի Սանոյանի կողմից և նա էլ հանդիսացել է իրական վարկառուն, այլ ոչ թե Դիմողը:

Այս համատեքստում, ըստ էության ստեղծվել է մի իրավիճակ, երբ Փաստաբանների կողմից ստացած տեղեկատվությունները, ակնհայտորեն պարունակել են տվյալներ վեճի առարկայի մասին, որոնք Փաստաբաններին հայտին են դարձել Դիմողի որպես վստահորդի շահերը ներկայացնելիս, ինչի կապակցությամբ էլ ողջամտորեն առկա է եղել Դիմողի որպես վստահորդի համոզմունքն այն մասին, որ դրանք առնվազն չեն բացահայտվելու և չեն օգտագործվելու իր դեմ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ վստահորդների շահերի հակասության դեպքում, փաստաբանի նմանատիպ վարքագիծը վարկաբեկում է փաստաբանի կոչումն ու հեղինակությունը և հասարակության մոտ փաստաբանի դերի և նշանակության վերաբերյալ բացասական կարծիք է ձևավորում:

Նշվածն առնվազն բավարար է Հանձնաժողովի համար ողջամիտ համոզմունք ձևավորելու և եզրահանգելու այն, որ քննարկման առարկա իրավիճակում առնվազն առկա է եղել կամ կարող էր առաջանալ Դիմողի կողմից Փաստաբաններին վստահված գաղտնիքի կամ այնպիսի տեղեկատվության բացահայտման վտանգ, որը կարող է անբարեխիղճ արտոնություն ստեղծել նոր վստահորդների համար՝ առավել ևս այն դեպքում, երբ Դիմողին մատուցված փաստաբանական ծառայությունների և նոր վստահորդերին մատուցվող ծառայությունները վերաբերում են միևնույն առարկային՝ վերը նշված պայմանագրին:

Նման պայմաններում, Հանձնաժողովը, գնահատելով սույն կարգապահական գործի քննության ընթացքում ձեռք բերված նյութերը, ինչպես նաև Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացրած բացատրություններն ու ապացույցներն իրենց ամբողջության մեջ, գտնում է, որ Փաստաբանների վարքագծում առկա են Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.2.2 և 3.2.8 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներ:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը</u>

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել:

4) փուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.10 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *փուգանքի չափը սահմանում է փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը, որը չի կարող գերազանցել սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկը: Տուգանքը փաստաբանը վճարում է փաստաբանների պալատի բյուջե:*

Վերը նշված իրավական նորմերի համակարգային մեկնաբանության արդյունքում Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ Պալատը հանդիսանում է փաստաբանների մասնագիտական, ինքնակառավարվող միավորում, որի խնդիրներից մեկը փաստաբանների իրավաչափ և փաստաբանի վարքագծի կանոններին համապատասխանող վարքագծի ապահովումն է, որը դրսևորվում է Հանձնաժողովի կողմից Օրենքով սահմանված կարգով փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործառույթի իրականացման մեջ:

Օրենքով հստակ նախատեսված են կարգապահական պատասխանատվության միջոցների այն տեսակները, որոնք Հանձնաժողովն իրավասու է կիրառել կարգազանց փաստաբանների նկատմամբ: Ընդ որում, Օրենքում ամրագրված են փաստաբանի պատասխանատվության անհատականացման համար կիրառելի չափանիշներ:

Օրենքով Հանձնաժողովին վերապահված կարգապահական գործառույթից և այդ թվում փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ իրականացնելու և կարգապահական տույժ կիրառելու իրավազորությունից հետևում է, որ Հանձնաժողովը ոչ միայն իրավասու է, այլև պարտավոր է յուրաքանչյուր դեպքում իրականացնել փաստաբանի կողմից կատարված արարքի որակում Օրենքի և Կանոնագրքի շրջանակներում և դրան համապատասխան՝ նշանակել համապատասխան կարգապահական տույժ:

Համաչափության սկզբունքը

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, խոսելով իրավունքների սահմանափակումների իրավաչափության մասին, առանձնացնում է հետևյալ հիմնական տարրերը՝ նպատակի իրավաչափություն, իրավաչափ նպատակի և այդ նպատակին հասնելու համար կիրառված միջոցների միջև համաչափության ողջամիտ հարաբերակցություն (Case of Khalfaoui v. France, 14.03.2000) :

Սույն պարագայում Պատասխանողին նշված կարգապահական տույժի ենթարկելու իրավաչափ նպատակն Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով Պալատի վրա դրված խնդիր-պարտականության իրացումն է՝ ապահովել փաստաբանների կողմից ՀՀ օրենսդրության և փաստաբանական էթիկայի նորմերի պահպանումը փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջոցով: Իսկ ընտրված միջոցի համապատասխանությունը բխում է ընտրված կարգապահական տույժը նշանակելիս և Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության անհատականացման չափանիշները կիրառելիս Պատասխանողի վարքագծի ծանրության, մեղքի աստիճանի և Պատասխանողի անձը բնութագրող հատկանիշների քննությունից:

Օրենքի 39.10 հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում տույժի տեսակը փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է կիրառել՝*

1) սույն օրենքով նախատեսված պարտականությունների (ներառյալ՝ ***սույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով*** *նախատեսված վարքագծի կանոնների) դիտավորությամբ կատարված խախտման դեպքում, որը, պայմանավորված կատարման հանգամանքներով կամ առաջացրած հետևանքներով, համատեղելի չէ փաստաբանի կարգավիճակի հետ:*

Վերոգրյալ նորմից հետևում է, որ Հանձնաժողովին իրավունք է տրվում փաստաբանի նկատմամբ կիրառել արտոնագրի դադարեցման կարգապահական տույժը միայն նրա կողմից դիտավորությամբ կատարված այնպիսի խախտման դեպքում, որը, պայմանավորված կատարման հանգամանքներով կամ առաջացրած հետևանքներով, համատեղելի չէ փաստաբանի կարգավիճակի հետ:

Տվյալ դեպքում, Փաստաբանները մեղավոր են ճանաչվել նաև **«Փաստաբանության մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի** խախտման համար, ինչը համատեղելի չէ փաստաբանի կարգավիճակի հետ:

Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ նաև համանման գործերով Խորհրդի կողմից նախկին նշանակված տույժերին:

Մասնավորապես, փաստաբան Ռոմեն Ահարոնյանը Պալատի Խորհրդի 27.08.2012թ. թիվ 25 նիստի թիվ 21/1-Ա որոշմամբ ճանաչվել է մեղավոր **Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի և Կանոնագրքի 3.2.8-րդ հոդվածի պահանջների խախտման համար**, և վերջինիս նկատմամբ նշանակվել է տույժ՝ տուգանք 200.000 ՀՀ դրամի չափով և լրացուցիչ տույժ՝ իր հաշվին, վեց ամսվա ընթացքում տասներկու ժամ, մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների՝ «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հիմնախնդիրները» թեմայով այն բանի համար, որ Ռոմեն Ահարոնյանը որպես «Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի» ՓԲԸ ներկայացուցիչ պաշտպանել է վերջինիս շահերը ընդդեմ «Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի» ՓԲԸ աշխատակիցների, **իսկ փաստաբան դառնալուց հետո իրավաբանական օգնություն է ցույց տվել «Դինո Գոլդ Մայնինգ Քամփնի» ՓԲԸ նախկին աշխատակիցներին:**

Բացի այդ, փաստաբան Ավագ Լալայանը Պալատի հանձնաժողովի 07.05.2025թ. թիվ
ԿԳ-24180-2-Ա որոշմամբ ճանաչվել է մեղավոր ***Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.2.2 և 3.2.8 ենթակետերի խախտման համար,*** և վերջինիս նկատմամբ նշանակվել է տույժ՝ տուգանք 200.000 ՀՀ դրամի չափով, ինչպես նաև լրացուցիչ տույժ՝ 6 ամսվա ընթացքում պարտադիր վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով 4 ակադեմիական ժամ ժամաքանակով այն բանի համար, որ փաստաբան Ավագ Լալայանը **ներկայացրել է «Սքայըլլու Թրեյդինգ Սոլուշնս» ՍՊԸ-ի շահերը** թիվ ՍՆԴ/1506/04/20 սնանկության գործի շրջանակներում ընդդեմ Կարեն Սահակյանի, իսկ հետագայում թիվ ՍՆԴ/0072/02/23 քաղաքացիական գործով ըստ «Եվան Գրուպ» ՍՊԸ-ի հայցի ընդդեմ «Սքայըլլու Թրեյդինգ Սոլուշնս» ՍՊԸ-ի, դրա նախկին տնօրեն Արմեն Մելիքյանի և Կարեն Սահակյանի, հանդես է եկել «Սքայըլլու Թրեյդինգ Սոլուշնս» ՍՊԸ-ի **նախկին տնօրեն՝ նոր վստահորդ Արմեն Մելիքյանի** անունից և կատարել է գործողություններ, որոնք ուղղակիորեն հակասում էին «Սքայըլլու Թրեյդինգ Սոլուշնս» **ՍՊԸ-ի՝ որպես նախկին վստահորդի** շահերին: Ընդ որում, թե սնանկության, թե քաղաքացիական գործերի հիմքում ընկած է եղել Սքայըլլու Թրեյդինգ Սոլուշնս» ՍՊԸ-ի և Կարեն Սահակյանի միջև կնքված պարտքի ճանաչման և կատարման պայմանագիրը, որի անվավեր ճանաչելուն ուղղված հայցվոր՝ «Եվան Գրուպ» ՍՊԸ-ի պահանջի վերաբերյալ **պատասխանող Արմեն Մելիքյանի ներկայացուցիչ փաստաբան Ավագ Լալայանը** հայտնել է դիրքորոշում, որով ընդունում է հայցը, հավելելով, որ «պայմանագիրը համարում ենք շինծու գործարք»:

Քննարկվող գործերում կարևորը նախկին և ներկա վստահորդներին իրավաբանական ծառայությունների մատուցումն է այդ վստահորդների միջև շահերի հակասության պայմաններում, ինչպես նաև վստահված գաղտնիքի բացահայտման վտանգի կամ դրա բացահայտման և նոր վստահորդին անբարեխիղճ արտոնություն ստեղծող տեղեկատվության տիրապետումն է, որպիսի հանգամանքներն առկա է ինչպես Փաստաբանների, այնպես էլ, համապատասխանաբար, փաստաբան Ռոմեն Ահարոնյանի և փաստաբան Ավագ Լալայանի գործերի պարագայում:

Մեղքի աստիճանը

Տվյալ պարագայում, Հանձնաժողովը հաշվի է առնում այն փաստը, որ գործի նյութերով հաստատված է համարվում Փաստաբանները, նախկին և ներկա վստահորդների շահերի հակասության և նախկին վստահորդի համաձայնության բացակայության պայմաններում, ոչ միայն միջոցներ չեն ձեռնարկել նոր վստահորդի կողմից տրվող հանձնարարության ընդունումից և/կամ դրա հետագա կատարումից հրաժարվելու ուղղությամբ, այլ նաև նշված փաստը բացահայտելու պայմաններում, չեն դադարեցրել նոր վստահորդի շահերի պաշտպանությունը, դեռ ավելին՝ Հանձնաժողովի նիստի ժամանակ շարունակել են պնդել, որ Լեոնիդ Համբարձումյանն անարդար է վարվել իրենց վստահորդ Ռոբերտ Սանոյանի հետ:

Հարկ է նաև նշել, որ Փաստաբանները մեղավոր են ճանաչվել նաև Կանոնագրքի 3.2.8 ենթակետերի խախտման համար, հետևաբար նույնիսկ եթե առկա լիներ վստահորդի գրավոր համաձայնությունը՝ ուղղված փաստաբանին, Կանոնագրքի 3.2.8 ենթակետի վրա այն չի կարող տարածվել:

Միևնույն ժամանակ, Հանձնաժողովը հարկ է համարում նշել, որ Փաստաբանների կողմից թիվ ԵԴ2/29742/02/23 քաղաքացիական գործով հայցվորների անունից ներկայացված միջնորդությունից հետևում է, որ Փաստաբանները հստակորեն գիտակցել են, որ ներկայացնելով իրենց նոր վստահորդների շահերն ընդդեմ նախկին վստահորդի, այն դեպքում, երբ իր նախկին և նոր վստահորդների միջև առկա է շահերի բախում, և առկա է նախկին վստահորդ Դիմողի կողմից Փաստաբաններին վստահված տեղեկատվության բացահայտման և այդ տեղեկատվությանը Փաստաբանների տիրապետման ուժով նրա նոր վստահորդներ Ռոբերտ Սանոյանի և Լիլիթ Մրրիկյանի համար անբարեխիղճ արտոնության առաջացման հնարավորություն, ինչը խախտում է Օրենքի և Կանոնագրքի պահանջները:

Հանձնաժողովն արձանագրում է, որ վստահորդների շահերի հակասության դեպքում, փաստաբանի նմանատիպ վարքագիծը վարկաբեկում է փաստաբանի կոչումն ու հեղինակությունը և հասարակության մոտ փաստաբանի դերի և նշանակության վերաբերյալ բացասական կարծիք է ձևավորում:

Կարգապահական խախտման հետևանքները

Հանձնաժողովը հաշվի է առնում այն հանգամանքը, որ Փաստաբանն իրեն մեղսագրվող արարքը կատարելով գործել է ի վնաս իր նախկին վստահորդ՝ Դիմողի, ում շահերը պետք է պաշտպաներ մշտապես, անկախ փաստացի ներկայացուցիչ լինելու հանգամանքի, ինչի արդյունքում թիվ ԵԴ2/29742/02/23 քաղաքացիական գործով հայցը բավարարվելու պարագայում Դիմողի՝ որպես գործով պատասխանողի համար առաջանալու են անբարենպաստ հետևանքներ, որոնք կրելու է միայն վերջինս՝ որպես իրավունքի առանձին սուբյեկտ, անկախ նրանից, թե ինչ շահեր են հետապնդել կողմերը:

Փաստաբանի անձը, կարգապահական վարույթները, առկա տույժերը

Հանձնաժողովը հաշվի է առնում՝ Փաստաբանների անձը բնութագրող հանգամանքները՝ մասնավորապես կարգապահական տույժերի բացակայության փաստը, և միայն այդ հանգամանքի հաշվառմամբ չի կիրառում ամենախիստ «փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում» տույժի տեսակը, որը ելնելով սույն գործով Փաստաբաններին վերագրվող վարքագծի և հաստատված փաստերի համատեքստում, կարող էր կիրառվել ակնհայտ կոպիտ կարգապահական խախտման դեպքում:

Ըստ այդմ, Հանձնաժողովը, հաշվի առնելով կարգապահական պատասխանատվության ուղղիչ և կանխարգելիչ նշանակությունը, գալիս է այն եզրահանգման, որ Փաստաբանների նկատմամբ պետք է կիրառվի կարգապահական տույժ՝ «տուգանք» նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Միաժամանակ, հետագայում նմանատիպ իրավիճակները կանխարգելելու նպատակով, ինչպես նաև նկատի ունենալով, որ խախտումն իր բնույթով հիմնականում վարքագծային-էթիկական բնույթ ունի՝ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում Փաստաբանների նկատմամբ որպես լրացուցիչ տույժ կիրառել «վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 2-րդ և 4-րդ մասերի պահանջներով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Արթուր Ներսեսի Պետրոսյանի (արտոնագիր՝ թիվ 655) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ տուգանք՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, ինչպես նաև լրացուցիչ տույժ՝ 6 ամսվա ընթացքում պարտադիր վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով 4 ակադեմիական ժամ ժամաքանակով Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.2.2 և 3.2.8 ենթակետերի խախտման համար:

2. Փաստաբան Վահագն Արայի Բաղրամյանի (արտոնագիր՝ թիվ 884) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ տուգանք՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով, ինչպես նաև լրացուցիչ տույժ՝ 6 ամսվա ընթացքում պարտադիր վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ «Դեոնթոլոգիա» թեմայով 4 ակադեմիական ժամ ժամաքանակով Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «դ» ենթակետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.2.2 և 3.2.8 ենթակետերի խախտման համար:

3. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-25059-3-Ա
04 հունիսի 2025թ.
ք. Երևան